



Մելքոնեան հաստատութեան շրջանաւարտները Զօպանեանի հետ՝ 1953թ.

1938-ին Փարիզի մէջ պիտի տօնուէր իր գրական-հասարակական գործունէութեան 50-ամեակի յօբելէանը հոծ բազմութեան մը ներկայութեան: Յաջորդ տարիներուն ան յաճախ կը ձգտէր կազմակերպելու հրապարակագրական ձեռնարկներ ծանօթացնելու հայ մշակոյթն ու գրականութիւնը, ինչպէս նաեւ կատարելով ուսումնասիրութիւններ եւ թարգմանութիւններ որոնց որպէս արդիւնք 1945-ին Սորպոնի համալսարանին մէջ պիտի կազմակերպէր հայ մշակոյթէն նուիրուած գիտաժողով մը, որուն ներկայ պիտի վտնուէին նաեւ Ֆրանսացի գրողներ ու լրագրողներ:

Յառաջացած տարիքը իր աշխուժութեան արգելք չէր կրնար հանդիսանալ: 1952-ին 80-ամեայ մշակոյթի պլեհեր դեսպանը պիտի հրաւիրուէր Պէյրութ՝ Գարեգին Յովսէփեանց Կաթողիկոսի հրաւերով ու տարի մը պիտի մնար Լիբանան: Այդ շրջանին հոն կը գտնուէր ՌԱԿ-ի կեդրոնը ու Թէքէեան Մշակութային Միութեան Հիմնադիրներու Մարմինը: Լիբանանի գաղութէն ներս իր առաքելութիւնը աւարտած Զօպանեան պիտի վերադառնար Փարիզ:

1954 Յունիսին ան գոհ պիտի երթար ինքնաշարժի մը 82 տարեկանին յաւիտեան իր աչքերը փակելով:

Մեծ երախտաւորը պիտի մնայ Զօպանեան, որովհետեւ ան կրցաւ դրսեւորել հայ ժողովուրդը իր փառքով ու ցաւով ներկայացնելով օտարին, իսկ սփիւռքահայութեան համար եղաւ ուժը հայրենաշինութեան:

**ՌԱԿ ՄԱՍՈՒԼԻ ՄԵՐ ՄԻԴԵԼԻ ՅՕԴՈՒՄՇԱԳԻՐՆԵՐՈՒՆ ՌԻՇԱՂՈՒԹԵԱՆ**  
 Ձեզմէ ազնուաբար պիտի խնդրէինք Ձեր յօդուածները՝ նկարներով մէկտեղ, յետայսու ուղղել խմբագրութեանս հետեւեալ հասցէին՝ [ragmamoul@gmail.com](mailto:ragmamoul@gmail.com)  
 Ընտրիակալութիւն Ձեր ազնիւ գործակցութեան համար: